

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 79

Մարդու ստեծագործութիւնը եւ նրա մեղքի մէջ անկումը սերտելուց յետոյ, հիմա հասել ենք մեղաւոր մարդու փրկութեան: Բայց նախքան նախելու սրան, կայ մի էական նիւթ որը պէտք է սերտուի, ու որի վրայ է հիմնւել Աստուծոյ փրկութեան ծրագիրը: Սա Աստուծոյ ուխտերի վարդապետութիւնն է: Շատեր ենթադրում են թէ այս վերակազմ աստուածաբաններէն է հնարւել, սակայն ուխտաշին աստուածաբանութիւնը Աստուծաշնչային աստուածաբանութիւն է, որովհետեւ Աստուած մարդկանց հետ իր տարբեր ուխտերի համեմատ է վարուում: Թէպէտ ուխտերի վարդապետութիւնը եկեղեցական պատմութեան ընթացքին միշտ ներկայ է եղել, այդ վերակազմիչներն էին որոնք կարգաւորած կազմութեամբ պարգաբանեցին ու կաղապարեցին (սահմանեցին) դրան:

Անցեալ մի երկու դարերի ընթացքին այս մասին շատ շփոթութիւններ են տեղի ունեցել: Պատճառներից մէկը վերջին աստուածաբանական ուսուցումներից մէկն է որը նանաչւած է որպէս «Բաժանաշին» կամ «Շրջանաշին» աստուածաբանութիւն: Այս ծանօթացել է տասնիններորդ դարում որը ուսուցանում է թէ Աստուծաշնչում կան եօթը բաժիններ կամ ժամանակաշրջաններ որոնցում մարդիկ փորձարկում կամ ստուգում են Աստուծոյ տւած որոշ հրահանգների հնազանդութեան համար: Մի անհատ ընդունելի կամ անընդունելի է Աստուծուն հիմնւած իր տւած պատասխանին այդ շրջաններում: Սա այս ժամանակաշրջաններով բաժանում է Աստուծաշնչին, փրկութեան ծրագիրը ու Աստուծոյ ժողովուրդը: Իսկ միւս կողմից, ուխտաշին աստուածաբանութիւնը ներկայացնում է Աստուծաշնչի, փրկութեան ծրագրի եւ Աստուծոյ ժողովրդի միութիւնը Սուրբ Գրքի մէջ Աստուծոց հաստատուած տարբեր ուխտերով:

Հարցումը որ պիտի հարցնենք այս է թէ «Աստուած ինչպէ՞ս է վարում մարդու հետ»: Աստուծաշնչում Աստուած մարդու հետ ունեցած իր յարաբերութիւնը հաստատել է մի շարք հրահանգներով ու խոստումներով, որոնք նանաչւած են որպէս ուխտեր: Եբրայեցերէն ուխտ բառը կոչւում է «Բեթ Իթ» ու Յունարէն այն կոչւում է «Դեաթէթ» որոնք Աստուծաշնչում 300 անգամներից աւելի են գործածւել: Մեծաւ մասամբ սրանք ակնարկում են Աստուծուն ու մարդուն, բայց նաեւ ինչպէս ժողովրդների ու ազգերի միջեւ յարաբերութեանց:

Մարդկանց նկատմամբ, կարող ենք ասել թէ ուխտը մի պաշտօնական եւ պարտադրական համաձայնութիւն է, ուր երկու կամ աւելի մարդիկ ներդրում են որոշ առանձնաշնչաբանութիւններով ու պարտականութիւններով: Իսկ Աստուծոյ նկատմամբ ուխտի երկու կողմնակալները իրարու հաւասարներ չեն: Աստուած գերիշխան է եւ իր ուխտերը սակարկելի չեն, այլ աստուծային պարտադրած յարաբերութիւններ են: Լույս Բրքի համաձայն գրում է «Աստուած բացարձակապէս գերիշխան է մարդու հետ իր վարմունքի մէջ, եւ կատարեալ իրաւունք ունի հեղինակելու այն պայմանները որոնց մարդը պիտի լրացնի որպէսզի կարողանայ Նրա հանութիւն վայելի:» Տես Ուէսթմինիստըր Հաւատոյ Հանգանակ, գլուխ 7, բաժին 1:

Մենք նման օրինակներ ենք տեսնում հնադարեան յայտնաբերուած դաշնագրերը յաղթող թագաւորների ու պարտուած ժողովրդների միջեւ: Փոխարէն կոտորելու նրանց թագաւորը որոշում էր իշխել ու հպատակեցնել նրանց վրայ պարտադրանքներ դնելով որ նրանք լրացնէին դրանց: Այսպիսի դաշնագրեր մի քանի բաժիններ ունէին, ինչպէս ներածականը որը նշում էր յաղթող թագաւորին կամ իշխանին, ապա պատմական նախաբանը որը կարն պատմական էր ներկայացնում թէ թագաւորը ինչ էր արել, եւ ապա պայմանները որոնք թագաւորից պարտադրած օրէնքներն էին, յետոյ հարկազրութիւնը որը նշում էր հնազանդութեան պարագային թագաւորի խոստացած առաւելութիւնները կամ օրհնութիւնները, եւ անհնազանդութեան պարագային նրա սպառնած պատիժներն ու անէժները: Դաշնագրութիւնը վաւերացնում էր վկաների ներկայութեան մէջ կատարած մի երդումով, կամ մի խոստումով, եւ որպէս սովորութիւն այն կնքւում էր մի անասունի գոհի արիւն թափելով, որը ցոյց էր տալիս թէ այն ուխտի պայմանները չլրացնողը մահապատժի ենթակայ պիտի լինի:

Այս գաղափարի օրինակներից շատ ենք տեսնում Աստուծաշնչի մէջ ուր գերիշխան Աստուած իր ժողովրդի հետ ուխտ է հաստատում: Առնենք մի օրինակ: Աստուած Տասը Պատուիրանները սկսում է մի ներածականով, ներկայացնելով իր ու լինելը, եւ ապա մի պատմական նախաբանով, թէ Նա ինչ էր արել (Ելից 20:2): Ապա Աստուած ժողովրդին իր օրէնքն է տալիս (համարներ 3-17), յետոյ հետեւում է Աստուծոյ ուխտի հարկազրութիւնը: Թէպէտ սրանք նշել են զանազան հատուածներում, նրանցից ամենապարզ եւ ամենալուրջ մասերից մէկը Երկրորդ Օրինաց 28 գլուխն է (1-14 օրհնութիւններ եւ 15-68 անէժներ): Եւ ապա Աստուծոյ ու մարդկանց միջեւ եղած ուխտը արիւնով էր վաւերացել ու կնքւել (Ելից 24:4-8): Հարկ է նշել թէ ոչ բոլոր Սուրբ Գրային ուխտերը այսպէս խոր ու մանրակրկիտ են ինչպէս վերիշնչուած օրինակը, բայց եւ այնպէս մի ուխտի իսկ մասերը, այսինքն մասնակիցները, պայմանները ու հետեւանքները, ներկայ են իւրաքանչեւում:

Ուխտաշին աստուածաբանութիւնը փրկութեան պատգամի հասկացողութեան վերակազմ հնարք է չի, այլ դա Աստուծաշնչի իսկ կերպն է բացատրելու թէ պատմութեան մէջ ինչպէս է Աստուած գործել փրկելու ժողովրդին: Ուխտաշին աստուածաբանութիւնը շատ կարեւոր է ուղիղ հասկանալու Աստուծաշնչի ամբողջ կազմութիւնը, թէ՛ Հին եւ թէ՛ Նոր կտակաբանները: Այն նաեւ շատ կարեւոր է հասկանալու թէ ո՞վ է Աստուած, ի՞նչ է արել Նա եւ թէ ի՞նչ է խոստացել անել: Առանց այս կաղապարին շփոթւելու, սխալ հասկանալու եւ ծուռ վարդապետութիւնների մէջ ընկնելու մեծ վտանգ կայ: